

3. Յ ձայնը (կարգա եւրոպական y) պահուած է միայն երեք ձևերու մէջ. այն է. յիսնկէ՝ յաղթեւ. յիս՝ յետոյ. յրդէ՝ յղի:

(Շարունակելի)

Հրաշեայ Յ. Աճառեան.



ԵՐԿՐԱԳՈՐԺԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ

ԳԻՏԵԼԻԲՆԵՐ.

(Շարունակութիւն)*

ՎՆԱՍԱԿԱՐ ՄԻՋԱՑՆԵՐ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ԴԷՄ ԿՈՌԵԼԱՌԻ ՄԻՋՈՑՆԵՐ.

* Եւ հասոցից մեզ փոխանակ ամացն յորս եկեա մարտիսն եւ շորեակն եւ ցրոյծն եւ խառնիճն: Յոկչ, Բ. 25:

Ա. Մարէի. Անշուշտ ամենքին, ինչ հասակի կուզի լինի, ծանօթ կլինի այս աւերիչ միջատի անուշը: Սա տարածուած է համարեա ամբողջ երկրագնդի երեսին. Եւրոպայի Ասիայի Աֆրիկայի և Ամերիկայի զանազան տեղերը շատ անգամ ենթակայ են եղել այս արգարե. **պարհուրէլ** միջատի կործանիչ յարձակմունքներին: Գիտեն նաև շատերը, որ նորա սիրելի կերակուրը հասկաւոր բոյսերն են: Աւելի սակաւ են վնասուում նրանից սեցորենը (ձիակորեկ), վուշը, կանեփը և բանջարեղէնները: Բայց եթէ մորեխը չկարողանայ ձեռք բերել իր սիրած կերակուրը, այն ժամանակ նա ոչ միայն ամենայն տեսակ թաքմ բոյսերի, այլ նաև չորացածների վերայ ևս կսկսի յարձակուիլ: Պաղատու այգիներն ևս շատ անգամ ենթակայ են լինում նորա աւերիչ ազդեցութեանց: Մորեխն ուտում է ծառերի տերեւները, կռծում է մատաղ բնձիւղների կեղևը և ոչնչացնում խաղողենու պրտուղները և տերեւների կանթերը: Եւ որովհետեւ խորութիւն չի գնում կերակուրի մէջ, ուստի և աւելի սարսափելի է թւում այդ

միջատը: Խիստ շատակերութեամբ աչքի են ընկնում **հեպէթա Խեմաթ** մորեխի թրթուրները, բայց շնորհիւ զանազակ և կանոնաւոր ընթացքին, նրանց յարձակմունքները չեն կարող այնպէս երկիւղ պատճառել ազգարնակութեանը, ինչպէս թեւաւոր կամ թափառական մորեխներից բաղկացած մի սեւ ամպի անսպասելի երեւոյր, որ իջնելով երկրի վերայ, միանգամից ոչնչացնում է ամբողջ դաշտեր, մերկացնում է անտառներ և այգիներ: Ամէն տեղ, երբ գիւղացիները հորիզոնի վրայ նկատում են մորեխի մի այդպիսի ստակալի ամպ, շտապում են դաշտ և ճիշդ ու աղաղակ բարձրացնելով, աւելներ, փայտեր, ծղոնի փառուած խուրցեր շարժելով աշխատում են վախեցնել յառաջացող թշնամուն, հեռացնել նրան իրենց ցանքերից: Թէպէտ երբեմն նրանց յաջողուել է այս միջոցով ազատել մորեխի աւերմունքից առանձին արտեր, բայց շատ անգամ այս միջոցը պատճառ է դառնում զղզակի մորեխի տարածուելուն, նպաստել է զանազան տեղերում ձուաներ գնելուն: Այս եղանակով կռուելու օգուտը այն է միայն, որ մորեխի հասցրած վնասը փոխանակ մեկի սեփականութեան կամ կալուածքի՝ շատերի վերայ է տարածւում: Բայց յամենայն դէպս զարձեալ ոչ մի նպատակայարմար բան չի ներկայացնում այս և դեռ ի զուր տեղն էլ պատճառ է դառնում տարածելու վարակումը:

Նկատուած է, որ երբ մեծ քանակութեամբ մորեխ հաւաքուած է լինում մի տեղ, համաձայնակը աւելի շուտ է անցնում, որովհետեւ այդպիսիների մէջ աւելի հեշտութեամբ կարող են առաջանալ զանազան մանրիկ կենդանիներ—պարազիտներ և սոււնիկ, որոնք պատճառ կդառնան առաջ բերելու նրանց մէջ զանազան տարափոխիկ հիւանդութիւններ: Բացի դրանից մորեխների այդպիսի մեծ բաղմութեան մէջ աւելի հեշտութեամբ երևան կդան նաև բաղմութիւն օգտակար միջատներ և թռչունների, որոնք յարձակուելով մորեխի վրայ, կարճ ժամանակուայ մէջ ահադին քանակութեամբ կոչնչացնեն: Այս պատճառով էլ մորեխների դէմ կռուելու վերոյիշեալ միջոցը, որ շատ տեղերում գործադրուում է, աննպատակայարմար է և նոյն իսկ ինչպէս տե-

սանքս փնասակար, ուստի և պէտք է աշխատել որ ամէն տեղ արմատախիլ անեն այդ անբնական եղանակը և խրաբանչէր անձն իր սեփական միջոցներով աշխատի նիւթապէս օգնել մորեխից փնասուող զիւղացուն, բայց զբանից հարկաւոր է նաեւ ամէն միջոց ձեռք առնել հենց տեղն ու տեղը ոչնչացնելու ստակալի արշաւանք սկսող այդ միջափի դէմ:

Այսպիսի դժբախտութիւնների ենթակայ չլինելու համար դաշտերն ու կալուածքները հասարակութիւնը կարող է փոխադարձ կերպով ապահովել և այդ կարծում եմ ամենից ներդործական միջոցներից մէկն է ոչ միայն մորեխի պատճառած փնասների վերաբերմամբ, այլ և այն ուրիշ փնասների, որ յաճախ յուսալացնում են զանազան այլ և այլ փնասակար միջատների, երբեմն երբեմն յարձակուելով դաշտերի, անտառների, այգիների և բանջարանոցների վրայ: Ինքն ըստ ինքեան հաւանալի է, որ սոյնանման ապահովացումը վրնասուողին միմիայն նպաստ տալու համար չէ: Այս նպատակի համար կազմած ընկերութեան անդամների պարտականութիւնն է մշտապէս հսկել մէկ մէկու կալուածքների վրայ, թէ արդեօք ապահովուած դաշտերում ինչ միջոցներ են ձեռք առնուած կուտելու փնասակար միջատների դէմ. հարկաւոր դէպքում կարելի է նաեւ փոխառութիւն անել կամ նպաստ հասցնել, որպէս զի կանոնաւոր միջոցներ ձեռք առնուին կուտելու, երբեմն նաեւ ցանկացողներին յարմար հանգամանքներում օգտակար խորհուրդներ տալ և այլն:

Մորեխներին ճիշտօրէն ազմուկով զանգակի ձայնով և այլ այսպիսի միջոցներով բշտելու հալածելու փնասակար հետեւանքներն աւելի պարզ ցոյց տալու համար, առաջ ենք բերում դուցէ ընթերցողի համար ոչ անծանօթ մի իրողութիւն: Պատահել են այնպիսի դէպքեր, որ հալածուող մորեխները անթիւ անհամար բազմութեամբ թափուել են գետերի, լճերի, ծովածոցների մէջ, խեղդուել են այնտեղ, վերելու ծուել և յետոյ իրեւ վարակիչ նիւթ այստեղից տարածուել է ահապին տարածութեան վրայ և վարակել մոտակայ տեղերը և ազդարնակութեան մէջ տարափոխիկ հիւանդութիւն առաջացրել: Այս արդէն պարզ ցոյց է տա-

լիս մորեխի դէմ վերոյիշեալ եղանակով կրուուելու անյարմարութիւնը և նոյն իսկ փնասակարութիւնը, ուստի և պէտք է ամէն կերպ աշխատել վերջ տալու:

Այն շատ տեսակի մորեխներ զբանցից ամենասոսկալին թափառական մորեխն է, որ զօրշկանաչ գոյն և չորս հատ անհասար երկայնութեամբ թեւեր ունի, որոնցից առաջին զոյգը զօրշագոյն է և վրան մութ բծեր կան, կարճ դերձանի պէս բողկուկներ եւ լաւ, յաջող ցատկելու համար երկայն և ամուր ետեւի սրունքներ ունի: Արծքի ներքեւի կողմը կարմիր է, իսկ մարմնի վերեւի մասը մոխրագոյն — կանաչ:

Գաշտերում շատ կգտնուին մորեխի մանր տեսակները, որոնք միշտ այս ու այն կողմ են ցատկոտում, բայց թափառական մորեխի պէս փնասակար չեն: Արանք իրենց թեւերը սրունքներին շփելով թոյլ խշրտոց են հանում: Արանցից նշանաւոր է կոնչող մաւրախը իր զարդարուն և կարմիր ետեւի թեւերով, որոնք սիրում են արեւոտ և մացառոտ տեղեր և թռչելու ժամանակ բարձրաձայն աղմկում են:

Կոնչող մորեխին նման է կանաչ մորեխը, որի բողկուկներն աւելի երկայն են: Արանցից ամէն տեղ կարելի է պատահել, որոնք թեւերը իրարու շփելով մի տեսակ ձայն են հանում:

Մորեխը գլխաւորապէս չորային տարիներից յետոյ է սկսում իր աւելից այցելութիւնները: Արանց բնակութեան բուն տեղը եղեգնուած ձահիճներ են, որտեղ եղեգների փափուկ արմատների մէջ տեղը էզը ձուեր է ածում: Շատ են սիրում եղեգն ուտել, բայց եթէ իրենց գտնուած տեղերում բաւականին սնունդ չգտնեն, անհամար բազմութեամբ դուրս կգան և մերձակայ դաշտերի վրայ կյարձակուեն: Այնտեղ գտած բուսականութիւնը ոչնչացնելուց յետոյ կգաղթեն մեծ բազմութեամբ հեռաւոր դաշտեր, երկրների, ուտելով ծանապարհին պատահած համարեա ամբողջ բուսականութիւնը: Թափառական մորեխի բանակները շատ անգամ ժամերով անցնում են միմեանց յետեւից և այնպէս խիտ, որ ինչպէս վերեւ յիշեցինք, ամպերի նման արեւ են խաւա-

բեցնում և մի քանի ժամուայ ընթացքում բոլոր պատուհները, հացարդյուները, խոտը և այգիների ծառերի տերեւները ուտում, ոչընչացնում են: Չուելու ժամանակ էդ մորեխները այստեղ, այնտեղ յարմարաւոր տեղերում հողի մէջ ձուեր են դնում, որոնցից հետեւեալ փարուայ ամբան սկզբներին առաջ են դալիս շատակեր թրթուռների, որոնք ձուաներից խտոյն լոյս աշխարհ դուրս գալուն պէս սկսում են ուտել դաշտում երեւացող կանաչը:

Հետաքրքրութեան արժանի է մորեխի դրած ձուաների կազմութիւնը. նա իր ձուաները ոչ թէ ուղղակի թափում է գետնի երեսին, այլ առանձին պարկերի մէջ, որոնք առանձին գեղձերից արտադրուած փրփուրից և զանազան բուսական մնացորդներից են կազմուած: Այդ պարկերը խիստ տարբերուում են միմեանցից: Բարակ պատեր ունեցող պարկերը պահուած են լինում հողի մէջ աւելի խորը, քան հաստ պատեր ունեցողները, բայց դրանից առաջինները եթէ մի կերպ հողի երես դուրս բերուին խտոյն կոշտանան, մինչ գետ միւս տեսակի պարկերը, եթէ նոյն պայմանների մէջ դնենք աւելի ընդունակ են դառնում զիմադրելու զանազան արտաքին մնասկար զօրութեանց:

Այստեղից պարզ երեւում է, որ այն տեղերը, ուր տարածուած է բարակ պատեր ունեցող ձուապարկեր, լաւ կլինի վաբել՝ նախ նրա համար որ վաբելիս այդ պարկերը հեշտութեամբ կսկսեն քայքայուել և նրանց մէջ պատասպարուող ձուկները և որդերը մնալով բաց օդի տակ, անընդունակ կլինին կոխմել վատ եղանակի գէմ, որով և շուտով կփչանան և երկրորդ՝ որ բարակ պատեր ունեցող պարկերը, եթէ մինչև անգամ վնասուած էլ չեն, բայց դուրս գալով երկրի երես, շատ քիչ պաշտպանուած կլինեն զանազան միջատակեր թռչուններից անտեսանելի կենդանիներից, արեւի կիզիչ ճառագայթներից և ցրտից:

Այսպիսով ուրեմն մենք տեսնում ենք, որ այդ վնասակար կենդանիների դէմ կոխմելիս, նոյնպէս անհրաժեշտ է իմանալ, թէ արդեօք ո՞ր տեսակ մորեխների կամ բոժոժների հետ գործ ունենք, ապա նոր ձեռք

առնել այս կամ այն միջոցը:

Ճշմարիտ է, թէպէտ միջատների տեսակների մասին որոշ ծանօթութիւններ ունենալը այնքան էլ հեշտ բան չէ և ոչ մասնագէտ գիւղատնտեսի մասնաւոր գիւղացիների համար կարող է շատ դժուար թուալ, բայց այսպիսի դէպքերում նրանց մասին որոշ անհրաժեշտ տեղեկութիւններ ունենալը գործնական կերպով խիստ կարեւոր է, որպէս զի ամէն մի ոչ մասնագէտ մարդ հնարաւորութիւն ունենայ տարբերել մի միջատ իրեն շատ նման ուրիշ միջատներից: Բայց միջատներ որոշելուց հարկաւոր է ձեռք ձեռքի տալ և որոշել, թէ արդեօք ո՞րքան վարակուած են մեր դաշտերը մորեխի ձուապարկերով և թէ արդեօք ի՞նչ վիճակի մէջ են գտնուում այդ պարկերի միջի ձուաները կամ որդերը:

Մի որ և է տեղի պարկերի քանակութիւնը կարելի է հեշտ կերպով որոշել: Ասակածելի հողի զանազան մասերը մէկ մէկ քառարշին հող զգուշութեամբ պէտք է փափուցել և մաղել նոսր մաղով: Եթէ նկատուի, որ մէկ քառարշին հողի մէջ 10-15 հատ պարկեր կան, պէտք է այդ վտանգաւոր համարել և շուտով միջոցներ ձեռք առնել:

Եթէ սոյնանման հետազոտութիւնը կատարուում է աշնանը, իսկ կոտեւելու միջոցները պէտք է ձեռք առնել զարնանը, այն ժամանակ այդպիսի տեղերը պէտք է նախօրօք մի որ և է բանով նշանակել, որ տեղերը աչքից չկորչեն մինչև ժամանակը: Որպէս զի իմանալ, թէ այս ի՞նչ տեղում մորեխի ձուապարկեր կան կամ ոչ, պէտք է աչքի առաջ ունենալ. նախ թէ արդեօք նախօր տարին կամ նոյն տարուայ ամառուայ մէջ բոյսերը մորեխից յատուկ վնասներ չեն կրել և երկրորդ արդեօք այդ տեղով մորեխ չի անցել:

Որոշելու համար, թէ արդեօք պարկերի մէջ ձուաներին վնասակար մանրիկ կենդանիներ կան և եղած դէպքում ի՞նչ քանակութեամբ, հաւաքած հողերը մաղելիս պէտք է վերցնել պարկերը և զգուշութեամբ բաց անելու մէջը ուշադրութեամբ դիտել: Երբ պարկերի ձուաների մէջ նկատուի զանազան ճանձերի, պատենաթիւ միջատների և այլոց սպիտակ կամ դեղնաշոյն որդեր, այդպիսի պար

կերը պէտք է համարել արդէն փնասուած և բոյսերի համար բոլորովին անփնասո որովհետեւ այն մանրիկ կենդանիները պարագիտները իրանք հոգսկոտանեն պարկերի մէջ եղածներին ոչնչացնելու: Եթէ բոլոր հետազոտած պարկերից կէսն անգամ այդպիսի մանրիկ կենդանիներ ունենան, իսկ փնացածը առողջ, այդպիսի տեղերի մասին ոչ մի ուշադրութիւն հարկաւոր չէ դարձնել, կռուելու համար ոչ մի միջոց չպէտք է գործադրել, որովհետեւ այսպիսի դէպքում փնասը շատ աննշան կլինի: Որովհետեւ մենք փնասուած պարկերը մանրիկ կենդանիներով հարուստ պարկերից ջնկելու ոչ մի հնարաւորութիւն չունենք, ուստի և ոչնչացնելիս մենք կարող ենք մի մեծ սխալ գործել, այն է սխալմա կոչնչացնելը այն պարկերը, որոնք հարուստ են մեզ համար օգտակար այդ մանրիկ կենդանիներով և որոնք իրեն մեր ամենաբաւ օգնականներն են հանդիսանում այսպիսի նեղ և փտանգաւոր հանգամանքներում: Բայց եթէ կարեւոր է շատ շուտով փնասակար միջատներէ առաջն առնել, այն ժամանակ պէտք է սպասել այնքան, մինչև որ դուրս կգան որդերը և այն ժամանակ կարելի կլինի ոչնչացնել ոչ թէ բոժոժները, պարկերը, այլ դուրս եկած մատաղ միջատները, միայն այդպիսի դէպքում պէտք է աշխատել ուշադրութիւն դարձնել, որ միջոցները գործադրուին այն ժամանակ, երբ միջատները դանդաղաշարժ են և միայն մի որոշ տեղումն են գտնուում:

Կռուելու միջոցներ. Մորեխի յառաջացած սոսկալի փնասի պատճառով ամէն տեղ ուր այդ սոսկում պատճառող միջատը բնակութիւն է հաստատում, ազգաբնակութիւնը ստիպուած է գործ դնել իր բոլոր միջոցները նրանց ոչնչացնելու համար: Ռուսաստանում կայ մի որոշ օրէնք, որով մորեխ երեցած տեղի ազգաբնակութիւնը պարտաւորուած է ձրի կերպով կռուելու նրա դէմ: Բայց որովհետեւ մորեխի դէմ միջոցներ ձեռք են առնում միայն այն ժամանակ, երբ նա արդէն ամենախիստ չափով տարածուած է լինում, երբ նա սպառնում է ոչնչացնել ամենամեծ տարածութեան վրայ գտնուող հոցարդյակը, անգամայն այդ պատճառով դժուար թէ ձեռք առած միջոցներն արդիւնաւոր հետե-

ւանքներ ունենան, նոյն իսկ ինքն ազգաբնակութիւնը դժուարանում է իրագործել իրեն յանձնած պարտականութիւնը: Նրանց ձեռք առած միջոցները սրանք են:

Ա. Այն հոգերը, որոնց մէջ մթերուած են մորեխի նրբաթաղանթ բոժոժները, պէտք է խնամքով երեսանց վարել կամ տափնել, որով միայն կարելի է բոլորովին ոչնչացնել: Յարմարաւոր ջրատար տեղերում փոխանակ վերոյիշեալ միջոցը գործ դնելու, կարելի է բաց թողնել ընտանի անասունների մի ամբողջ հօտ և ձիաների երամ, որպէս զի կոխկռտելով, ցիւխով խառնուին մորեխի մթերանոցները և այդպիսով փչանան: Նոյն կերպ հետեւել և ոչնչացնել պէտք է միջատների և դաշտային ճանապարհների վրայ եղած բոժոժները:

Բ. Մորեխի ձուաներով հարուստ արտերը կարելի է նաև խորը վարել և այդպիսով առաջն առնել ձուաներից դուրս եկող որդերին հողի երես դուրս գալու: Վարելուց յետոյ կարելի է նաև արտի երեսին ծանր հարկել զորել: Այս կերպ պէտք է վարել և անպատճառ յաջող հետեւանքներ կունենայ, թէ նրբաթաղանթ և թէ կարծրաթաղանթ բոժոժներով հարուստ հոգերը: Կռուելու ամենաշատ տարածուած և ամենազործածական միջոցը պէտք է համարել մորեխներին դէպ յատուկ նրանց համար պատրաստած առուներ քշելը և նրանց մէջ թափելը: Ինչ ճանապարհով որ ընթանում են մորեխի թրթուրները, այնտեղ մի արշին խորութեամբ և 3/4-1 արշ, լայնութեամբ ուղղաձիգ պատեր ունեցող առուներ են փորում, որպէսզի այդ առուները լցուելուց յետոյ նրանց սատակեցնելով ոչնչացնեն և ապա վրաները հող ածել:

Թրթուրներին ջնջխում են առանձին գործիքներով (БОЛОКУШКАМИ) հաստ աղիւսաձև փայտերից և տախտակներից կազմուած շրջանակներով կամ քարեայ զլանակներով:

Մորեխ գտնուած տեղերում կարելի է բուսականութեան վրայ սրտիկ ֆարիգէան *

* Փարիզեան կանաչը (парижская зелень) մի քիմիական խառնուրդ է միշգեղի (мышьяк) և պղնձի արջասպի (медный купорос), որի մէջ 58 0/0 առաջինը է, ձեռք բերելու համար կարելի է դիմել Կոպկասի գիւղատնտեսական ընկերութեանը, որի պահեստում պուգը 17 ռուբ. ծախուած է:

կամ ինչպէս ասում են նաև Թրանսկաւան ա-
նունով յայտնի փոշու և ջրի մէջ լուծուած
կրի խառնուրդը: 40 վեղրանոց մի տակաւ
ջրի համար պէտք է վերցնել 2-3 գրուանքայ
յիշեալ փարիզիան կանաչի փոշուց և 20 գր-
ուանքայ նոր պրած և հանգցրած կիր: Ջրի
մէջ այդ Փարիշեան կանաչի լուծելուց յի-
տոյ խառնում են ջրի մէջ լուծուած կրի հետ:
Առաջուած խառնուրդ հեղուկը պէտք է յի-
տոյ լցնել Վերմիլէէ գործիքի մէջ և սրբա-
կել: Առանձին ուշադրութիւն պէտք է դարձ-
նել, որ այս գործողութիւնը տեղի ունենայ
հենց խոցնի կրը ձուանելից դուրս են դա-
լիս թրթուրները, որից երկու շաբաթ յետոյ
կատարած սրսկումը համարեա ապարդիւն
կանցնի: Միջատները սրակած բոյսերն ուտե-
լով 1-3 օրուայ մէջ կսատակեն: Ափրիկայում
և Ասիայում կան այնպիսի ցեղեր, որ մորե-
կը իրեն կերակուր են գործ ածում. նախ
եփում են աղաջրում և ապա տապակում
իւղի մէջ:

Մարեխի ԲշտաՊէները. Մորեխի բնական
թշնամիներից մի քանի թռչուններ և կաթնա-
սուն կենդանիներ առանձին նշանակութիւն
ունեն: Վարդագոյն սարեակները, արագիլնե-
րը, ձկնկուշները, ագռաւները խիստ հեաե-
ւում են նրանց, իսկ արտուանները, ճայերը
(галки) բացի դրանից ոչնչացնում են նաև
նրանց ձուաները: Նոյն դերն են կատարում
կաթնասուններից խոզերը, խուրդները, մկները
և այլն: Մանր անտեսանելի կենդանիներից
մի քանիսը ոչնչացնում են մորեխների ձուա-
ները, միւսները ապրում են հենց ուղղակի
միջատների մարմնի մէջ:

**Գլխարմաձ. Гессенская муха или хлб-
ный комарик—(Cecidiomyia destructor Say)**
Գլխարմաձանը մի փոքրիկ միջատ է $1\frac{1}{2}$ գծա-
չափ երկարութեամբ. մարմնի ձևը նման է մո-
ծակի մարմնին, ունի իր մարմնի կիսից աւե-
լի երկար քնչացքներ կամ շոշափուկներ. սո-
փորարար էզինն աւելի կարճ է լինում: Երկ-
թեանի է. թեւերը մոխրագոյն են և զօրեղ, այն
պէս որ թռչում է մօտաւորապէս $\frac{1}{2}$ վերտո
աարածութիւն: Ատներն երկար են, բարակ և
շէկ, արուի որովայնը նեղ է, գրանաձև, իսկ
էզինը՝ լայն և ծայրը սուր: Մարմնի գոյնը

թուխ կարմիր է, որովայնի վրայ կարմիր յո-
ղեր ունի: Թրթուրները քիչ փոքր են, ունե-
նում են բաց դեղին գոյն և չունեն ոտներ:
Ամբողջ մարմնը բաղկացած է 13 յօդից,
որոնց կողքերում գտնւում են 9 զոյգ շնչա-
փող: Հարսնակը հանգստանում է փայլուն
կինամոնագոյն բոժոժի մէջ, որ նման է լինում
փուշի հատիկի: Այս միջատը բաղմնատեսակ է
և լինում է ուռենու, եղևնու, խանդափ և
մի քանի այլ ծառերի արմատիկների վրայ:
Խիստ վնասակար է բուսականութեանը: Ինչ-
պէս յայտնի է զարնանայան ցորենը գլխարա-
ձանձի տմենասիրելի կերակուրն է: Աս շատ
վնասակար միջատ է և փչացնում է ցորենի
համարի, երբեմն նաև գարու և շատ սակաւ
փարսակի արտերը: Մանաւանդ շատ խիստ
վնասում է աշնանացան ցորենը և համարը:
Գարնան սկիզբներին գլխարաձանձերը դուրս
են թռչում բոժոժներից, որոնց մէջ ձմերել
են և ամէն մէկը զանազան տեղերում աշնա-
ցանի կամ զարնանացանի տերեւների վերին
մասերում դնում են 40—80 կարմրագոյն
ձուլիկներ՝ $\frac{1}{6}$ — $\frac{1}{5}$ գծաչափ երկարութեամբ:
Ձուլիկներից 4-10 օր յետոյ, նայած եղանա-
կին, դուրս են գալիս թրթուրներ և սկսում
են մեծանալ, ծծելով մատաղ ցօղնուկների և
տերեւիկների հիւթը, ուտի և քամիներն ու
անձրեւներն էլ հեշտութեամբ կտորում են
հացարոյսերը, որից և բոյսը չորանում է:
Նրանց տեղ կրկին նոյն արմատներից բարձրա-
նում են ուրիշ ծիւրեր: Հասած թրթուրները
հարսնակ են դառնում կեղծ բոժոժների
մէջ, որոնք տեղաւորուած են լինում արմա-
տի մօտ գտնուող տերեւների պատեանում
ամէն տեղում մի քանիսը և այսպիսով
առաջ բերում սոխաձե ուռուցքներ, եր-
բեմն բոժոժները թաղուած են լինում հո-
ղի տակ արմատի մօտ մինչև $1\frac{1}{2}$ վերշ. խորու-
թեամբ: Միջատն իր կատարեալ զարգացմանը
հասնում է մօտաւորապէս 60 օրուայ քն-
թացքում, այնպէս որ զարնան վերջերում և
կամ ամրան սկիզբներում դուրս է թռչում
գլխարաձանձի երկրորդ սերունդը, որ դնում
է իր ձուերը միւսնոյն դաշտի ցորենի կամ
համարի կանաչ տերեւների վրայ: Ձուից նոր
դուրս եկած թրթուրները սողում են դէպի

տերեւի հիմքը և տեղաւորելով նրա պատեա-
նութիւն սկսում են ծծել ցօղունը որի պատ-
ճառով էլ վերջինս ծռւում է և վերջը
կոտրւում: Հասած ժամանակ հասկը դատարկ է
լինում կամ պարունակում շատ քիչ քա-
նակութեամբ մանրիկ սերմեր: Հացարոյսերի
հասնելու և կամ քաղի ժամանակ դուրս է
գալիս այս միջատների երրորդ սերունդը որը
ցորենի վրայ թաւում կանաչ չլինելու պատ-
ճառով, ձուեր է դնում այս և այն կողմ
թափթփուած հասած տերեւների և միքանի
այլ վայրերի խոտերի վրայ: Այս ձուերից աշ-
նանը առաջանում է չորրորդ սերունդը որն
իր քանակութեամբ ամենից շատն է լինում
և յարձակում է աշնանացանի մանաւանդ
ցորենի և հաճարի բոյսերի վրայ: Այս սերնդի
հասցրած փնասը մեծ է և խիստ զգալի ու-
րովհետեւ նրա թրթուրները տեղաւորւելով
խիստ մատաղ բոյսերի վրայ, արագութեամբ
ծծում են նրանց հիւթը և այդպիսով պատ-
ճառ դառնում ահագին տարածութեան վրայ
ձգուող աշնանացան ցանքերի ոչնչանալուն:
Նաև տեղերում ինչպէս օրինակ հարաւային
Ռուսաստանում յաջող պայմանների մէջ կարո-
ղանում է զարգանալ և դուրս գալ նոյն աշ-
նանը հինգերորդ սերունդը որից և առաջ է
գալիս հետեւեալ տարուայ առաջին սերունդը:
Առաջին սերունդի փնասակար աղդեցութիւնը
սկսւում է սովորաբար մայիսի վերջերից, բայց
աւելի նկատելի կերպով յունիսից: Վնասուած
ցօղունները թէպէտ հասկեր տալիս են, բայց
սովորաբար լինում են դատարկ, կամ նայած
հացարոյսի տեսակին և ոյժին պարունակում
են իրենց մէջ անբաւարար կերպով զարգացման
տարբեր աստիճաններում գտնուող հատիկ-
ներ: Վնասուած ցօղունների ստորին կապե-
րը մէկ կամ մի քանի տեղերում փնասուած
են լինում, որոնց պատճառով ցօղունները
քամու կամ սեփական ծանրութիւնից յա-
ճախ կամ բոլորովին ջարդւում են և կամ
կռանում: Այդպիսի դէպքում եթէ, շատ ցօ-
ղուններ այդ վիճակին ենթակայ եղած լինեն
ամբողջ դաշտը կարծես կարկառահար կամ կո-
խան է եղած անասուններից: Արքան զօրեղ
առողջ հացարոյսերը բնորոշակ են զիմպրե-
ու գլթորածանձի թրթուրի յարձակումն:

րին, նոյնքան և խիստ կերպով կփնասուեն
նրանցից թոյլ, հիւանդոտ բոյսերը: Նաև ան-
գամ գլթորածանձից փնասուած ցօղունները
դադարում են աճելուց, իսկ հասկը կամ
այլ ևս չի զարգանում և կամ դադարում է
բոլորովին հատիկներ տալուց, բայցի դրանից
տհաս նիհար ցօղունները միջոց են տալիս
անարգել կերպով անպէտք բոյսերին աճել
և այն դաշտը որ փնասուած է գլթորածան-
ձից հատիկների հասունութեան շրջանում
փոխանակ հեռուից դեղին, ընդհակառակը
շատ տեղերում կանաչագոյն կերելի: Չմոռա-
նանք ասել, որ մատաղ հացարոյսերի փնա-
սուած տերեւիկները դեղնում են և եթէ
զրանք շատ են, աշնանացանի արտը աշնան
վերջերին ծածկւում են զանազան ձևերի
և մեծութեան դեղին բծերով: Առաջին ժա-
մանակներում այդ երեւոյթը վերադրում
էին կամ անձրեւի պակասութեան և կամ
ընդհակառակը մինչդեռ իսկական պատճառն
իմանալու համար, բաւական է, եթէ քաղենք
միքանի մատաղ բոյսեր և պոկենք արտաքին
տերեւները և եթէ փնասի պատճառն գլթո-
րածանձն է, այն ժամանակ զժուար չէ տես-
նել յիշեալ միջատի թրթուրները և հարս-
նակները որոնք գտնւում են համարեա ցօղ-
նուկի և տերեւի պատեանի միջավայրում և
եթէ թրթուրները շատ են, մինչև անգամ
կատացուեն մէկ կամ միքանի կապանման ան-
հարթութիւններ:

Պէտք է նկատել, որ գլթորածանձն ամեն
ժամանակ միքանի սերունդ չի կարող տալ
այդ կախումն ունի ամառուան և տեղի խո-
նաութեան և բարեխտունութեան աստիճա-
նից, չորութիւնը դանդաղեցնում է թրթուր-
ների և հարսնակների զարգացումը, այդ
պատճառով էլ հարաւային երկրներում եր-
րորդ սերունդը չի դուրս գալիս, այլ երեւում է
միայն աշնանը, երբ սովորաբար դուրս է
թուշում չորրորդ սերունդը: Գլթորածանձը
հէնց աշնանից բնակութիւն հաստատելով աշ-
նանացան արտերում սկսում է փչացնել մա-
տաղ բոյսերի մի մասը, յաջորդ սերունդը
շարունակում է և վերջացնում առաջինների
սկսած զործը: Հետեւեալ դարնան և ամրան
ընթացքում:

Այս փաստակար միջատի զէմ կռուելու համար խորհուրդ ենք տալիս ձեռք առնել հետեւեալ միջոցները:

Ա. Աշխատել աշնանացան հացարոյսերի ցանքը, որքան կարելի է, վաղ կատարել, աչքի առաջ ունենալով, որ այդպիսով կատարուեն աւելի առողջ և ոյժեղ բոյսեր, որոնք թէպէտ և կենթարկուեն Վրդթորածանձի աշնանային սերունդի յարձակմունքներին, բայց համեմատաբար աւելի հիշտութեամբ կտանեն փնտր և աւելի քիչ զգայի կլինի նրանց համար, ուստի և շատ ճշշին կլինի կորուստը: Կան և այնպիսի միջատարաններ, որոնք ընդհակառակը, խորհուրդ են տալիս, որքան հնարաւոր է, աշնանացանն ուշ սկսել (այսպէս օր. սեպտեմբերի վերջերին, հոկտեմբերին), հաշուի առնելով, որ այդպիսով հացարոյսերը ծիւրեր կարծակին, կրարձրանան այն ժամանակ, երբ արդէն զգթորածանձի աշնանային սերունդը վերջացած կլինի և այդպիսով բոյսերը ազատուած կլինեն յարձակմունքներից: Բ. Այնպիսի զէպքերում, երբ շատ է տարածուած այս փնտրակար միջատը, խորհուրդ ենք տալիս չափաւորել աշնանացանքերը և նրանց տեղ առատորէն զարնանացան անել: Գ. Յորենի կամ հաճարի հրապուրիչ ցանքեր անել: Աշնանացանքի հացարոյսերը հասնելուց յետոյ յուլիսի վերջերին կամ օգոստոսի սկիզբներին նրանց կից հողի նեղ շերտերի մօտաւորապէս $\frac{1}{2}$ սաժ. լայնութեան վրայ, ցանել ցորեն, հաճար: Հարաւային երկրներում եթէ այդ տեսակ հրապուրիչ ցանքերը շատ վաղ է կատարած, օգոստոսի սկիզբներին պէտք է անպատշաճ խորը կերպով վարել և վրան ծանր հարթիչ (КАТОКЪ) գլորել: Բոյսի մատաղ ծիւրերի վրայ, աշնանացանի հացարոյսերը հաւաքելուց յետոյ, փնտրած բոժոժներից դուրս եկած զգթորածանձերը ձուեր են դնում: Այդ հրապուրներով կարելի է պաշտպանել աւելի ուշ երեւացող աշնանացանքերի նորածիլ բոյսերը զգթորածանձի յարձակմունքներից և այդպիսով չարիքը կենդրոնացնել որոշ տեղերում: Երբ հրապուրելու համար ցանած ցորենի նեղ շերտերում որդերը կոխեն հարսնեակներ դառնալ, պէտք է խիստ զուժանով օվերը և դեռ աւելի խորութեամբ վարել, որից և

որդերն ու հարսնեակները հողի տակ դնալով, կոչնչանան: Դ. Փանի դեռ հատիկները հատիկերի մէջ կատարելապէս չեն չորացել, պէտք է քաղել արար: Ե. Գլթորածանձի բոժոժներից դուրս դալուց առաջ, պէտք է հնձից յետոյ այս միջատով վարակուած խոզանները անմիջապէս այրել:

Խիստ մեծ է սրա հասցրած փնտր զիւղացիների մանաւանդ ցորնի արտերի համար: Գլթորածանձը տարածւում է քամու օդնութեամբ, որ քշում տանում է հեռաւոր երկրներ և հարսնեակների օգնութեամբ, որոնք ուրիշ երկրներ են տարւում յարդի հետ միասին: Գլթորածանձի որդերին առանձնապէս փնտրակար են միքանի տեսակ պարազիտներ—մանրիկ կենդանիներ, որոնք կարճ ժամանակուայ ընթացքում բնաջինջ են անում հազարաւոր այդպիսի միջատներ: Այդ պարազիտները զանազան տեղերում տարբեր չափով են տարածուած լինում: Եթէ մի օր և է արտի զգթորածանձի որդերը մեծ տոկոս են կալմում (երբեմն 90% -ից բարձր), այն ժամանակ չպէտք է այդպիսիները ոչնչացնել, որովհետեւ նրանց հետ միասին կոչնչանան նաեւ օգտակար պարազիտները:

(Կը լայնանալու է).

Գ. 2.



ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ *

Մեր եկեղեցական—հասարակական կեանքի հրատապ խնդիրներից մէկն է և քահանաների ապահովութեան հարցը, որը հետաքրքրութեամբ քննադատուում է թէ ճաճ կահայոց թէ Ռուսահայոց մամուլի մէջ:

Այդ բանին առիթ տուին Բաթումի քահանաների ռոժիկ սահմանելու որոշումը:

* Մենք սիրով սպում ենք Շնոր. Նիկողայոս սարկաւազի այս յօդուածը, որովհետեւ մեր եկեղեցու ներքայ հրատապ խնդիրներից մէկին և վերաբերում, բայց նմանապէս չենք կրնա թողնու մեծերին, որի մասին առիթ կուանամք ցրելու: